ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գրիգորյան,

Ի պատասխան Ձեր 01.12.2023թ. գրության՝ Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի փողոցի 1-ին նրբանցքի հ.11 շենքի 1-ին մուտքում առկա խնդիրների վերաբերյալ, տեղեկացվում է, որ համաձայն «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքի (այսուհետև՝ Օրենք) 6-րդ հոդվածի՝ բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում են շենքը կրող կառուցվածքները, շենքի միջհարկային ծածկերը (առաստաղները, հատակները), նկուղները, ձեղնահարկը, տեխնիկական հարկերը, տանիքը, ինչպես նաև մեկից ավելի շինություններ սպասարկող և բազմաբնակարան շենքի միասնական ամբողջական սպասարկման համար նախատեսված մուտքերը, աստիճանավանդակները, աստիճանները, վերելակները, վերելակային և այլ հորերը, մեխանիկական, էլեկտրական, սանիտարատեխնիկական և այլ սարքավորումներն ու տարածքները, որոնք օրենքով նախատեսված կարգով չեն հանդիսանում այլ անձանց սեփականություն:

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընդհանուր բաժնային սեփականության սեփականատերերի պարտականությունը այդ սեփականությունն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով պահպանելն ու շահագործելն է:

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ շինության սեփականատերերը պարտավոր են իրականացնել ընդհանուր բաժնային սեփականության պահպանման այն պահանջները և պարտադիր միջոցառումներն ու աշխատանքները (այսուհետ՝ պարտադիր նորմեր), որոնց չիրականացումը կարող է ուղղակի վտանգ ներկայացնել ընդհանուր բաժնային սեփականությանը, շինությունների սեփականատերերի կամ այլ մարդկանց կյանքին, առողջությանը, անձանց գույքին, շրջակա միջավայրին:

Բազմաբնակարան շենքի պահմանման պարտադիր նորմերը սահմանված են ՀՀ կառավարության 04.10.2007 թվականի «Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը սահմանելու մասին» հ.1161-Ն որոշմամբ:

Տեղեկացվում է նաև, որ յուրաքանչյուր տարի աջակցության կարգով իրականացվում է բազմաբնակարան շենքերի մուտքերի, տանիքների վթարային պատշգամբների վերանորոգման աշխատանքներ՝ բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների կողմից ներկայացված խիստ անհրաժեշտ աշխատանքներից ելնելով: Բարձրացված խնդիրը կքննարկվի Ֆուչիկի փողոցի 1-ին նրբանցքի հ. 11 շենքը կառավարող մարմնի (համատիրության) հետ և 1-ին մուտքի վերանորոգման աշխատանքները կընդգրկվեն 2024 թվականի մուտքերի վերանորոգման ծրագրում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ